Ընդունված է ԳՊՀ ուսանողական

գիտական ընկերության ժողովի կողմից՝ 2018թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I.Ընդհանուր դրույթներ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ԳՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որի նպատակն է սովորողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելը:
2. Ընկերությունը գործում է ՀՀ օրենսդրության, ԳՊՀ Կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
3. Ընկերությունն իր նպատակների իրականացման համար համագործակցում է ԳՊՀ ուսանողական խորհրդի, ԳՊՀ գիտական խորհրդի, ֆակուլտետների խորհուրդների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:
4. Ընկերությունը կարող է հրատարակել գիտական հոդվածների ժողովածու, ունենալ խորհրդանշան, ձևաթուղթ, համացանցային կայք:
5. Ընկերության անվանումն է՝ հայերեն՝ Ուսանողական գիտական ընկերություն, ռուսերեն՝ Студенческое Научное Общество, անգլերեն՝ Student Scientific Society, իսկ հապավումը հայերեն՝ ՈԳԸ, ռուսերեն՝ СНО, անգլերեն՝ SSS:
6. Ընկերությունը գործում էՀայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ 1201, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

II.Ընկերության նպատակն ու խնդիրները

7. Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական աճին, գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:
8. Ընկերության խնդիրներն են.
   1) գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների խրախուսում և իրականացում,
   2) ուսանողական գիտաժողովների, սեմինարների, քննարկումների, բաց դասախոսությունների և այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում,
   3) համակողմանի աջակցության ապահովում հետազոտական հակումներ ունեցող ուսանողներին,
   4) տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,
   5) ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,

6) այլ գիտական կենտրոնների հետ կապերի ստեղծում և համագործակցության ապահովում:

III.Ընկերության կառուցվածքը և ղեկավար մարմինները

9. Ընկերության կառուցվածքային սկզբնական մարմինները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են (այսուհետ՝ ֆայուլտետի ՈՒԳԸ), որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երեք ուսանողներից: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ԳՊՀ Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:
10. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի առաջադրմամբ ֆակուլտետի խորհուրդը հաստատում է ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահի և քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են ֆակուլտետի ՈՒԳԸ-ի աշխատանքները, համակարգում են նրա աշխատանքները, ներկայացնում ֆակուլտետի ՈՒԳԸ-ն և նրա ծրագրերը ԳՊՀ Ընկերության գիտական խորհրդում:
11. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են անդամների ավելի քան 1/2-ը, իսկ որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգը և իրականացնել սույն կանոնադրությանը չհակասող այլ գործառույթներ:
12. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահը հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի անդամ, ԳՊՀ ՈՒԳԸ գիտական խորհրդի անդամ:
13. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է կազմակերպել ուսանողական մասնագիտական ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի այլ ուսանողները:
14. ԳՊՀ Ընկերության ղեկավար մարմինը Ուսանողական գիտական ընկերության գիտական խորհուրդն է, որի նիստերը գումարվում են ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երկու անգամ:
15. Ընկերության գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են Ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետային ՈՒԳԸ-ների նախագահները:
16. Ընկերության գիտական խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.
    1)քննարկում և որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,
    2)առաջարկություններ է ներկայացնում ԳՊՀ գիտական խորհրդին, Ուսանողական խորհրդին, ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին,
    3)ի գիտություն է ընդունում Ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունը,
    4)մշակում է Ընկերության հեռանկարային և ընթացիկ ծրագրերը, հաստատում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ների ծրագրերը և համակարգում նրանց աշխատանքները,
    5)հաստատում է իր աշխատակարգը,
    6)որոշում է ընդունում շնորհել Ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է Ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցեր,

7)վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:

17.ԳՊՀ Ընկերության գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ:

18.Գիտական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության նախագահի, գիտական խորհրդի, անդամների մեկ երրորդի պահանջով:

19. ՈՒսանողական գիտական ընկերության նախագահն ընտրվում է Ընկերության անդամների կողմից՝ երեք տարի ժամկետով և ներկայացվում է գիտական խորհրդին:

20. Ընկերության անդամներն ընտրում են նախագահի տեղակալին և քարտուղարին՝ նույն ժամկետով:

21. Ընկերության նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ԳՊՀ գիտական խորհրդի անդամ:
22. Ընկերության գիտական խորհրդի անդամներ են հանդիսանում ֆակուլտետային ՈՒԳԸ-ների նախագահները:
23. Ընկերության նախագահն ի պաշտոնե ներկայացնում է Ընկերությունը, համակարգում Ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է Ընկերության մարմինների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, Ընկերության անունից կնքում պայմանագրեր և համաձայնագրեր:
24. Ընկերության նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԳՊՀ գիտական խորհրդում:
25. Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում՝ ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է քարտուղարության աշխատանքները և ՈՒԳԸ գիտական խորհրդի կողմից ստեղծված մարմինների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:
26. Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:

IV.Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

27. Ընկերության միջոցները գոյանում են ԳՊՀ բյուջեից կատարվող հատկացումներից, նվիրատվություններից, հանգանակություններից, դրամաշնորհային ծրագրերից, ԳՊՀ կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
28. Ընկերությունը անվճար օգտվում է ԳՊՀ տարածքից, գույքային, նյութատեխնիկական միջոցներից:
29. Ընկերության միջոցներն օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, սահմանված կարգով:

V.Ընկերության գործունեության դադարեցման կարգը

30. Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: